ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ

Հոդված 19.2. Զբոսաշրջության բնագավառում լիցենզիաներ տրամադրելու և հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման համար պետական տուրքի դրույքաչափերը

1. *(մասն ուժը կորցրել է 08.12.10 ՀՕ-242-Ն)*

2. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման (սահմանված չափանիշներին համապատասխան) համար, բացառությամբ զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միությունների կողմից տրվող որակավորումների՝

ա) մինչև երեք աստղ հյուրանոցի, մոթելի յուրաքանչյուր աստղի համար՝ տարեկան	բազային տուրքի 150 -ապատիկի չափով.
բ) չորս աստղ հյուրանոցի, մոթելի յուրաքանչյուր աստղի համար՝ տարեկան	բազային տուրքի 200-ապատիկի չափով.
գ) հինգ աստղ հյուրանոցի, մոթելի յուրաքանչյուր աստղի համար՝ տարեկան	բազային տուրքի 250-ապատիկի չափով.
գ.1) հինգ աստղ «Դելյուքս» հյուրանոցի համար՝ տարեկան	բազային տուրքի 1500-ապատիկի չափով.
դ) հյուրանոցատիպ հանգրվանի, առողջարանի յուրաքանչյուր աստղի համար՝ տարեկան	բազային տուրքի 100-ապատիկի չափով.
ե) հանգստյան և մասնագիտացված ճամբարի կամ տան, պանսիոնի, զբոսաշրջային, մանկապատանեկան, ճամբարային բնակատեղի (համալիրի)՝	
I կարգի համար՝ տարեկան	բազային տուրքի 150-ապատիկի չափով
II կարգի համար՝ տարեկան	բազային տուրքի 100-ապատիկի չափով
III կարգի համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով.
զ) զբոսաշրջային տան՝	
I կարգի համար՝ տարեկան	բազային տուրքի 15-ապատիկի չափով
II կարգի համար՝ տարեկան	բազային տուրքի 10-ապատիկի չափով
III կարգի համար՝ տարեկան	բազային տուրքի 5-ապատիկի չափով:

3. Զբոսաշրջության բնագավառում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) Զբոսաշրջային օպերատորների, զբոսաշրջային գործակալների, զբոսավարների և ուղեկցորդների գործունեության ծանուցման համար՝

ա) զբոսաշրջային օպերատորի գործունեության իրականացման ծանուցման համար՝ տարեկան	բազային տուրքի 80-ապատիկի չափով
բ) զբոսաշրջային գործակալի գործունեության իրականացման ծանուցման համար՝ տարեկան	բազային տուրքի 30-ապատիկի չափով
գ) զբոսավարի գործունեության իրականացման ծանուցման համար՝ տարեկան	բազային տուրքի 5-ապատիկի չափով
դ) ուղեկցորդի գործունեության իրականացման ծանուցման համար՝ տարեկան	բազային տուրքի 5-ապատիկի չափով.

2) Հյուրանոցային ծառայություններ մատուցող անձանց գործունեության ծանուցման համար՝

ա) հյուրանոցում հյուրանոցային ծառայություններ մատուցելու համար՝ տարեկան	բազային տուրքի 150-ապատիկի չափով
բ) ափարթհոթելում հյուրանոցային ծառայություններ մատուցելու համար՝ տարեկան	բազային տուրքի 10-ապատիկի չափով
գ) առողջարանում հյուրանոցային ծառայություններ մատուցելու համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
դ) մոթելում հյուրանոցային ծառայություններ մատուցելու համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով.
ե) հոսթելում հյուրանոցային ծառայություններ մատուցելու համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
զ) մասնագիտացված ճամբարներում կամ տներում հյուրանոցային ծառայություններ մատուցելու համար՝ տարեկան	բազային տուրքի 30-ապատիկի չափով
է) հանգստյան տներում (պանսիոնում) հյուրանոցային ծառայություններ մատուցելու համար՝ տարեկան	բազային տուրքի 20-ապատիկի չափով
ը) ճամբարային բնակատեղիում (քեմփինգ) հյուրանոցային ծառայություններ մատուցելու համար՝ տարեկան	բազային տուրքի 15-ապատիկի չափով
թ) հյուրատանը հյուրանոցային ծառայություններ մատուցելու համար՝ տարեկան	բազային տուրքի 15-ապատիկի չափով
ժ) զբոսաշրջային տանը (B&B) հյուրանոցային ծառայություններ մատուցելու համար՝ տարեկան	բազային տուրքի 5-ապատիկի չափով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի 1)-ին կետի ա)-բ) ենթակետերով և 2-րդ կետով նախատեսված ծանուցման ենթակա գործունեության միևնույն տեսակով մեկից ավելի վայրերում գործունեությունն իրականացնելու համար պետական տուրք գանձվում է յուրաքանչյուր վայրի համար:

5. Զբոսաշրջային ավտոբուսների, զբոսաշրջային փոքրաառությունների, զբոսավարների և ուղեկցորդների որակավորման համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) Զբոսաշրջային ավտոբուսների, զբոսաշրջային փոքրաառությունների, զբոսավարների և ուղեկցորդների որակավորման համար համար՝

ա) մեկ զբոսաշրջային ավտոբուսի որակավորման համար՝ տարեկան	բազային տուրքի 20-ապատիկի չափով
բ) զբոսաշրջային փոքրաառությունների որակավոման համար՝ տարեկան	բազային տուրքի 10-ապատիկի չափով
գ) զբոսավարի որակավորման համար՝ տարեկան	բազային տուրքի 5-ապատիկի չափով
դ) ուղեկցորդի որակավորման համար՝ տարեկան	բազային տուրքի 5-ապատիկի չափով
ե) զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի որակավորման համար՝ տարեկան	բազային տուրքի 20-ապատիկի չափով:»: